

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՐԱՄ ԲԱՍԵՆՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱՐԱՄ ՊԱՍԷՆԵԱՆ, ՈՐ Ի ԳՈՍԹԱ ՄԵՍԱ, ԱՄՆ

Գոհունակութեան խորը զգացումով Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, բարձրօրէն գնահատելով Ձեր հայրենասէր ու եկեղեցանուէր ոգին և տարիների բեղմնաւոր գործունէութիւնը՝ ի սպաս մեր ժողովրդի, մեր Հայրենիքի ու Եկեղեցու, մշակոյթի ու դպրութեան:

Յարգարժան պրն Պասէնեան,

Մենք տեղեակ ենք ԱՄՆ հասարակական կեանքում արձանագրած Ձեր յաջողութիւններին: Ասպուծոյ նախախնամ կամքով դեռևս պատանի հասակում ծնողաց հետ Դուք հաստատուեցիք Միացեալ Նահանգներում, որը Ձեր առջև բացեց կեանքի նոր ճանապարհներ: Կրթութիւն ստանալով երկրի բարձրագոյն կրթօջախներում՝ Դուք մասնագիտացաք ճարտարապետութեան ասպարէզում եւ այսօր մեծ ձեռնահասութեամբ ղեկավարում էք «Պասէնեան եւ Լակոնի» հաստատութիւնը, որը, զբաղուելով շինութիւնների կառուցմամբ Միացեալ Նահանգներում եւ աշխարհի շատ ու շատ երկրներում, վայելում է միջազգային հեղինակութիւն:

Ուրախութիւն է Հայրապետիս համար անդրադառնալ, որ ազգային-եկեղեցական մեր կեանքում հաւատաւոր հայորդուդ մատուցած նշանակալից ծառայութիւններն ու կատարած սրտաբուխ բարեգործութիւնները կազմում են ոսկեայ երկար շղթայ՝ համալրուելով նոր իրագործումներով: Տակաւին տարիներ առաջ Ձեր ազնիվ Տիկնոջ հետ միասին հիմնադիր

անդամներից մեկը եղաք Գոսթա Մեսայի՝ Սուրբ Աստուածածին եկեղեցու եւ մեծապէս նպաստեցիք եկեղեցու պայծառութեանը՝ մասնագիտական ու նիւթական աջակցութիւն բերելով Ծուխի եկեղեցաշինութեան ծրագրերին, համայնքային կեանքից ներս իրականացուող ձեռնարկներին: Առատաձեռն նուիրատուութիւններով սատարել էք նաև ազգային բազում հաստատութիւնների, կրթական ու մշակութային օջախների, բարձրագոյն կրթօջախներում սովորող մեր ժողովրդի զաւակների, նախանձախնդիր լինելով, որպէսզի Միացեալ Նահանգներում շէն ու պայծառ լինի հայ կեանքը եւ զօրաւոր հայորդեաց սէրը՝ հանդէպ ազգային մեր սրբազան ժառանգութիւնը:

Մեծապէս գովելի է, որ Ձեր գործունէութեան լայն ծիրի մէջ առանձնակի տեղ էք հատկացրել նաեւ աստուածապարգեւ մեր Հայրենիքին՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի եւ Հայաստանին աջակցելու կոչուած այլ ծրագրերի միջոցով ազնուօրէն ծառայութիւններ մատուցելով հայրենաբնակ մեր ժողովրդին: Դուք, արդարեւ, ժառանգել էք Իրանի հայ կեանքի բարի աւանդոյթները՝ ազգանուէր ու եկեղեցաշէն գործերով «գանձ անպակաս յերկինս» ամբարելով Ձեր եւ Ձեր ընտանիքի համար:

Ազգային եւ եկեղեցական մեր կեանքում Ձեր վաստակի ամենաբարձր գնահատականքով սիրով ընդառաջում ենք ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի խնդրանքին՝ Հայրապետական Սրբատառ Կոնդակով շնորհելով Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Սրտաբուխ աղօթքով հայցում ենք, որ Ամենակալ Աստուած հաւատոյ մեր հայր և մեծ խոստովանող Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ Իր հանապազ օրհնութեան ներքոյ պահպանի ընտանեկան Ձեր յարկը եւ զօրավիգ լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին բարի ու հայրենանուէր բոլոր իրագործումներում:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 30-ն Մայիսի
յամի Տեառն 2005 եւ ի թուին հայոց ՌՆԾԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 301